

ՀՈՎՀԱՆԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 1964 ՏԱՐՈՒԱՆ  
Ս.ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅՅ.ԵԿԵՂԵՑԻՈՑ

Միջեւ անդամներ,

Աստուծոյ ողորմած հոգածութեամբ եւ ձեր բոլորին օժանդակութեամբ ու գործակցութեամբ, եկեղեցական մեր գործերը տարի մըն ալ յառաջ տարինք:

Անցնող տարին կը նաև լին թէ մեր եկեղեցւոյ համար շատ քարեբաստիկ եւ բարգաւաճ տարի մը եղաւ վատահ եմ որ Պատուարժան Հոգաբարձութիւնը մանրամասն կուտայ ձեզի եղած նորոգութեանց, բարեփոխութեանց եւ բարեզարդութեանց տեղեկագիրը:

Սակայն չկարծէք թէ մեր բոլոր գործերը յառաջ գացին դիւրին եւ սահուն կերպով Ռունեցանք դժուարութիւններ, յուսահատութիւններ, քննադատութիւններ, սխալներ, բայց երեք չյուսալքութեանք, հապա աւելի հաւատքով, սըբազրելով մեր սխալները, հարթելով դժուարութիւնները, ժպիտով ընդունելով քննադատութիւնները գործեցինք միաբան եւ համերաշխ:

Որպէս Հովիւ հետեւեալ գործերը կարողացայ ընել անցնող տարի:

Ս.ՊԱՏԱՐԱԳ.- Ամէն Կիրակի եւ զոյգ ձբագալ ոյցներուն ունեցանք Ս.Պատարագ: Թեմական

Տարեկան եւ էյ.Սի.Վայ.Օի, պատգամաւորական ժողովներու առթիւ եկեղեցւոյ յսէջ Ս.Պատարագ չունեցանք: Ռունեցանք Սեծ Պահոց առթիւ չանգստեան եւ նաղաղական ժամերգութիւն, Արքագալի եւ Աւագ Շաբթուան արարողութիւններ: Քարոզները ջանացած եմ միշտ երկու լեզուներով տալ:

ԱՅՑԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ.- 1964 տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ այցելու

եկեղեցականները:

Գեր.Տ.Սիոն Արք.Մանուկեան- Մայիս 17-ին եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ: Հոգշ. Տ.Եղիշէ Վրդ.Կիզիրեան- Փետր.21, Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչներուն հետ հանդիպումի առիթով:

” ” ” ” ” -Ապրիլ 26-ին նահատակաց Տօնի առթիւ, Պատարագի եւ խօսելու:

” ” ” ” ” -Հոկտ.25-ին Պատարագի:

Հոգշ. Տ.Մերոպ Վրդ.Սէմէրճեան- Յունիս 5-ին, էյ.Սի.Վայ.Օի. Համար դասախոսելու:

Բարեշ. Մկրտիչ Սրկ.Մուրատեան-

” ” ” ” ” այցելութեան:

Բաեշ. Գրիգոր Սրկ.Ռուկանեան- Օգոստոս 30-ին, Կիրակնօրեայ առաւտեան պաշտամունքի եւ

Մայիս 17-ին, եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ խօսելու:

ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Կատարած եմ, Յ մկրտութիւն եւ Յ թաղում: Գերեզմանօքնէք կատարած եմ Մէմօրիալ Տէյի առթիւ եւ այլ առիթներով ծխականներու փափաքին ընդառաջելով:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Եկեղեցւոյս անդամներուն եւ շրջանիս հայ ժողովուրդին անխտիր այցելութիւններ տուած եմ զանազան առիթներով, մասնակցելով անոնց ուրախութեանց եւ բաժնելով իրենց ցաւերը: աղօթած, մխիթարած, քաջալերած եւ օրհնած եմ զանոնք: Այցելութիւններս դասաւորած եմ այսպէս:

|                          |     |             |
|--------------------------|-----|-------------|
| Հիւանդանոց հիւանդներու   | 59  | այցելութիւն |
| Տունի                    | 30  | ”           |
| Մահերու առթիւ ցաւակցական | 19  | ”           |
| Տունօքնէքի առթիւ         | 24  | ”           |
| Հովուական Ծխական         | 292 | ”           |

Ընդհանուրը 424

Երեք անգամ այցելութիւն տուած եմ էմըրսնի հայ Ծերանոցին եւ նիւթառունի նահանգային հիւանդանոցին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՆԵՐ.- Մասնակցած եմ հետեւեալ համագումարներու եւ ժողով-ներու:

Ապրիլ 30էն Մայիս 4, Տարեկան Հոգեւորականաց Համագումարին եւ թեմական Պատգամաւորական ժողովին ի Սառւթ Մէլ վոքի:

Մարտ 9ին Շրջանային եկեղեցականաց ժողովին, ի նիւ Պրըթըն:

Մարտ 21ին, Կիրակնօրեայ Դպրոցներու Շրջանային ժողովին: Նիւ Եղբա:

Յուլիս 14-17, Եկեղեցականաց ամառնային համագումարին: Եկպրոն Նիւ Ճըրզի:

Սեպտ. 4-7, էյ.Սի.Վայ.Օի. Տարեկան Պատգամաւորական ժողովին: Շիքակոյ:

Եւ Շրջանային հերթական ժողեւորականաց ժողովներուն, ամէն ամիս:

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.- Որպէս Հոգեւոր Հովիտ եւ ի պաշտօնէ Նախագահը եկեղեցւոյս բոլոր կազմակերպութեանց, սիրայօժար միշտ ներկայ գտնուած եմ վարչական եւ անդամական ժողովներուն, քաջալերած, օգնած, ծրագրած եւ ուղղութիւն տուած ուր եւ երբ որ պէտք եղած է:

#### ԵԿԵՂԵՑԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.- Թէեւ Խօթը անձեր ընտրուած էին Հոգաբարձութեան մէջ, սակայն երկու հոգիներ զանազան պատճառներով դադրեցան ժողովներու եւ եկեղեցի գալ է: Սնացեալ հինգ անձերը քաջաբար եւ նուիրումով շարունակեցին գործը եւ ի պատիւ իրենց, շատ գովելի արջիւնքով կատարեցին իրենց ուսերուն վստահուած եկեղեցական գործերը: Այս մասին պիտի լսեք իրենց տարեկան նիւթաքաղաքան տեղեկագրին մէջ:
- 2.- ՏԻԿՆԱՅԻ ՄԻՌՈՒԹԻՒՆ.- Հակառակ որ հննը տիկիներ ընտրուեցան Տիկնաց Վարչութեան համար, սակայն հինգը այս տիկիններէն ի յուսախաբութիւն մեզ հրաժարեցան: Սնացեալ Տիկինները առանց յուսահատութեան շարունակեցին գործը եւ պէտք եղած ատեն մեր անդամուն հիններուն դիմելով գործերը ի գլուխ հանեցին: Բոլորս ալ ուրախութեամբ ականատես եղանգ Տիկնաց Միութեան տուած Տարեկան մեծ Պազարին յաջողութեան: Վերջերս իրենց սարքած ամսական ճաշերով եւ նոր սկսած դասախոսութեանց շարքով աշխոյժ եւ շարժում ստեղծուած է մեր Տիկնաց մէջ: Առողջութիւն, ոյժ եւ յաջողութիւն կը մաղթենք իրենց:
- 4.- ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՅ.- Այս տարի Տիկ. Թէրէզա Հայրապետեանի, առողջական պատճառութեան ներով տեսչութենէն հրաժարելուն պատճառաւ, հրաւիրուեցաւ Տիկ. Լենա Կրաչեան որպէս Տեսչուհի: Խորումը մը երիտասարդ Տիկիններ հաւատքով եւ նուիրումով կ'աշխատին մեր զաւակներուն հոգեւոր դաստիարակութեան վեհ գործին: Թող երկնաւոր Հայրը վարձահատոյց ԱԼԱՅ իրենց:
- 5.- ԴՊՐԱՅ ԴԱՍԸ.- Դպրաց Դասի մեր անդամները սիրով եւ նուիրումով կուգան ամէն կիրակի ճոխացնելու մեր եկեղեցական պաշտամունքը: Օր. Սառա Տէր Մկրտիչեան մեզմէ խնդրեց որպէսզի Դպրաց խորմի ղեկավարութիւնը յանցնուի ուրիշ մէկու մը: Տիկ. Գեղան Մտամպոլեան հրաւիրուեցաւ այդ պաշտօնին: Դժուար եղած է բոլորը նոյն ատեն եւ միշտ փորձի ժամանակներ մէկտեղ ունենալ ոմանք դպրոցի եւ ոմանք գործելու եւ այլ պատճառներով կանոնաւոր չեն կրցած փորձերուն հետեւիլ: Զանացած եմ փորձերուն ներկայ ԱԼԱՅ եւ նոր շարականներ սորվեցնել անոնց:
- 5.- ԷՅ. Սի. Վայ. Օ. Է. Յ.- Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան մեր մասնակի ճիշդը, կազմուած է Կրտսէր անդամներէ. քանի մը երեցներ ունինք որպէս խորհրդական կ'օգնեն անոնց: Ուրախ ենք որ այս տարի Ծխական նորհութիւնի փոխ Ատենապետը Պր. Ֆրէտ Կրաչեան մեզի հետ կ'ըլլայ ժողովներուն եւ Հոգաբարձութեան անունով օգտակար կը դառնայ մեր նոր սերունդին: ՀԱՅԵՐէՆ ԴԱՍԱԿԱՆԴՈՒԹԻՒՆ.- Դարձեալ այս տարի Շաբաթ օրեր ժամը 10-12 կժւնե- նանք հայերեն լեզուի ուսուցման համար դպրոց: Առաջին առջիւ արձանագրութեանց թիւը 20 էր եւ պէտք եղաւ երկու դասարաններու բաժնել զանոնք: Նոր սկսողներուն համար հրաւիրուեցաւ Օր. Սոնա Վարժապետեան եւ յառաջացեալ ներու դասաւանդութիւնը ես կը կատարեմ: Դժբախտաբար աշակերտներուն թիւը չենք գիտեր ինչ պատճառաւ 10ի իջած է ներկայիս:
- ԶԵԽՆԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ.- Եկեղեցւոյս անուանակոչութեան ուրախ առիթով, մեր թելադրութեամբ եւ Հոգաբարձութեան հաւանութեամբ, Սրբազան Առաջնորդ Հայրը հրաւիրուեցաւ, որպէսզի եկեղեցւոյս համար Դպրաց ձեռնադրութիւն եւ Դպրուհիներու թօղերու օրհնութիւն կատարէ: Սրբազան Հայրը Ուրարի օրհնութիւն կատարեց եւ ուրարի կրելու իրաւունք շնորհեց Պր. Վարդան Մտամպօլեանի, իր երկարատեւ եկեղեցական ծառայութեանց համար:
- ՔՋԱՄԵՆԵԱԿԻ ԳՈՐԾԵՐ.- Խորհրդակատարութեանց արձանագրութիւնները, Սկըրութիւն, Ամուսնութիւն եւ Սահմանադրութիւն մը մէջ: Նամակագրութիւններ եւ թղթակցութիւններ կանոնաւորաբար պահուած են եւ մասնաւոր թղթակցաններու մէջ հաւաքուած:
- ԴԱՍԱԿԱՆՈՍՈՒԹԻՒՆ - Է. Յ. Սի. Վայ. Օ. Յի կազմակերպած "Սայաթ նովայի" նուիրուած երեկոյին, դասախոսութիւն մը տուած եմ անմահ աշուղի կեանքին եւ գործին մասին:

ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԹԵՐԹԻԿԸ.- Եկեղեցւոյս ամսական թերթիկը՝ Ս.Համբարձում, կանոնաւորաբար հրա-  
տարակուած է երկու լեզուներով, պատկերագրով եւ գեղատիպ։  
Թերթիկին մեքենագրութեան, տպագրութեան եւ մինչեւ նամակատուն տրուիլը, բոլոր գործերը  
եւ բոլոր ձեռնարկներուն յայտարարութիւնները կատարած եմ։  
Ըստ անցեալ տարուան խոստումիս, նամակատունները արտօնութիւն առի որպէսզի եւ բոլոր մեծագանակ թղթակցութիւնները, փոխանակ ջորս Սէնթի դրկուելու, մէկ սէնթ եւ քառորդի կը դրկենք։

Պազարի առթիւ հրատարակուելիք Ատ Պուքը՝ "Թայտարարութեանց Գիրքը" պատրաստեցի եւ փոխանակ տպարանին վճարելու ես մեր մեքենային վրայ տպեցի եթե Եկեղեցին քանի մը հա-  
րիւր տոլար խնայեցի։

Ուրախ եմ որ այս տարի չոգաբարձութեան կարգ մը անհատներ իրենց կողմէ գրութիւն-  
ներ տուին թերթիկին։ Բոլոր Եկեղեցւոյս կազմակերպութիւնները պէտք է լուրեր տան թեր-  
թիկին իրենց գործունէութեանց մասին։

Թերթիկնիս հաճոյքով կը կարդացուի եւ կը գնահատուի թէ մեր անդամներուն, թէ ուրիշ-  
ներու եւ թէ ալ Եկեղեցականներու կողմէ որոնց կը դրկենք զայն։

251 տոլար նուիրատուութիւն եղած է թերթիկին ծախսերը հոգալու համար։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Շատ մը նորոգութիւններ տեղի ունեցան Եկեղեցւոյս մէջ, որոնց մասին  
Հոգաբարձութեան տեղեկագրին մէջ պիտի լսէք։

Միայն հոս կը փափէիմ յիշել Ս.Նորանին եւ Ս.Սեղանին համար եղած նուէրները։  
Տէր եւ Տիկ. Մարթին Հալանեան Ս.Նորանին եւ Սկըտութեան Աւազանին համար նոր վարագոյբ-  
ները նուիրեցին։ Կիրակնօրեայ Դպրոցին կողմէ ուկէզօծ նոր բուրվառ մը նուիրուեցաւ,  
Երկու բարձրադիր աշտանակներ՝ Տէր Հօր կողմէ, Տիկիներ, Ֆէլիս Աւազեան, Գեղան Ստամպուլ-  
եան, եւ Տիկ. Զապէլ Կիւլպենկեան մետաքսեայ ձեռագործ Ս.Սեղանի ծածկոցներ, Խաչի եւ Աւե-  
տարանի բռնիչներ նուիրեցին։ Երեցկին Լուսին Գաշըզճեան, Երկու պատարագի ճերմակ շապիկ  
եւ Երկու ուրար կարեց Եկեղեցւոյ համարժանաւ եղան Ալիւրի, գինիի եւ Խուկի նուիրատու-  
ութիւններ, որոնց համար սրտագին շնորհակալութիւն կը յայտնենք։


Ունեցանք Երկու հատ բարակ մոմեր բռնելիք մասնաւոր գործիք, բուրվագակիրը գործածելու  
համար։

Նախ քան վերջացնել սկզբամ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Եկեղեցւոյս պատ-  
ուրժան Ծխական նորհուրդին, Տիկնաց Եկեղեցասիրաց Միութեան, Կիրակնօրեայ Դպրոցի Ուսուց-  
չական կազմին, էջ. Սի. Վայ. Օի. ին, Դպրաց Դասին, որոնք նուիրումով, հաւատքով եւ պապացայի  
վառ յոյսերով իրենց լաւագոյնը ըրին Ս.Եկեղեցւոյ պայծառութեան եւ Ամէնասուրը Եր-  
րոդութեան փառքին համար։ Շնորհակալութիւն Եկեղեցւոյս անդամներուն եւ բարեկամնե-  
րուն որոնք նիւթապէս եւ բարոյապէս զօրավիգ կանգնեցան մեզի։

Միրել իներ, տարին կանցնի սակայն շատ գործեր կան ու պիտի ըլլան եւ ինչպէս նա-  
խապէս յիշեցի, դիւրին դիւրին շեն մէջտեղ գար այս գործերը մմէն բան մէկէն չի շինուիր,  
մէկ անգամէն չի շտկուիր, մէկ գիշերուան մէջ չի կանոնաւորուիր։ Համբերութեամբ, յարա-  
տեւութեամբ եւ պապացայի հանդէպ մեր ունեցած հաւատքով պիտի կարենանք ամէն ինչ դէպի  
կատարեալ ը տանիլ։ Եթէ պատահի որ սիսալներ ալ գործուիրն, ներող աշքով պէտք է դիտենք։  
Աղմուկ բարձրացնել, հոս հոն քննադատութիւններ ընել, եւ երեխն ալ չարախօսութիւններ։  
ընել, մեր աշխատանքներուն եւ Աստուծոյ գործին կը վնասեն։ Վայ. Եղիշ որ թէ ես եւ թէ  
Հոգաբարձութիւնը միշտ պատրաստ է լսելու ձեր առողջ, շինիչ եւ օգտակար թել ադրութիւն-  
ները։ Զի մոռնանք որ մենք Աստուծոյ ծառայութեան մէջ ենք եւ պէտք է Անոր հաճելի գոր-  
ծեր կատարենք։

Ս. Պօղոս առաքեալի նման, հաւատքով զինուինք, բարիին պատերազմը պատերազմելու, հա-  
ւատքնիս պահելու եւ մեր ընթացք կատարելու։

Թող Արարիչն Ամենեցուն օրհնէ Պրիճը ըթի Ս.Համբարձում Հայց. Եկեղեցւոյ համայնքը,  
եւ պաշտօնեաները, թող իր Երկնային Լոյսը ծագէ մեր վրայ եւ ողորմի մեզի. ամէն։

Աղօթիւք եւ օրհնութեամբ  
  
Արարիչ ՔՀՆ. Գաշըզճեան  
Ճեր Հոգեւոր Հովհաննես  
Յունուր 1, 1965